ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը՝ Նոր ուսումնական տարվա և Գիտելիքի օրվա առթիվ

01.09.2026

Սիրելի՛ աշակերտներ, ուսանողներ, մանկավարժներ, ծնողներ և կրթության ոլորտի նվիրյալներ,
Սրտանց շնորհավորում եմ ձեզ Սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի և դպրության օրվա, ինչպես նաև նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ:
Սեպտեմբերի 1-ը յուրաքանչյուրիս համար առանձնահատուկ խորհուրդ ունի: Այն նոր ճանապարհի , նոր նպատակների , գիտելիքի ու բացահայտումների սկիզբ է:
Առանձնահատուկ ջերմությամբ շնորհավորում եմ մեր առաջին դասարանցիներին, ովքեր այսօր առաջին անգամ ոտք են դնում դպրոց՝ սկսելով իրենց կյանքի կարևոր ու հիշարժան փուլերից մեկը:
Սիրելի՛ աշակերտներ և ուսանողներ, կրթությունը ոչ միայն գիտելիք ձեռք բերելու, այլև մտածելու, ստեղծագործելու, սեփական ուժերին հավատալու և ապագան կերտելու հնարավորություն է: Մաղթում եմ, որ նոր ուսումնական տարին ձեզ համար լինի արդյունավետ, հետաքրքիր, նոր ձեռքբերումներով ու հաջողություններով լի:
Թող ձեր ստացած գիտելիքները դառնան ամուր հիմք՝ ձեր երազանքներն իրականացնելու և մեր հայրենիքի զարգացման գործում ձեր ներդրումն ունենալու համար:
Հարգելի՛ մանկավարժներ,
Ձեր առաքելությունը չափազանց կարևոր և պատասխանատու է: Ձեր ամենօրյա նվիրումով, համբերությամբ ու մասնագիտական աշխատանքով կրթում և դաստիարակում եք մեր վաղվա օրը կերտող սերունդներին: Շնորհակալ եմ ձեզ՝ ձեր անգնահատելի աշխատանքի և յուրաքանչյուր աշակերտի հաջողության մեջ ունեցած մեծ ավանդի համար:
Շնորհավորում եմ նաև ծնողներին, ովքեր մշտապես իրենց երեխաների կողքին են՝ աջակցելով նրանց կրթության ճանապարհին:
Թող 2026-2027 ուսումնական տարին լինի խաղաղ, բարեկեցիկ և արգասաբեր:
Թող այն նշանավորվի նոր գիտելիքներով, բարձր առաջադիմությամբ, կարևոր ձեռքբերումներով և իրականացած նպատակներով: